

# ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Բառերուէ Սարգսեան Շաքարեան, Արիստիսիա Յովհաննիսեան Յովսէփեան, Սարգսեան Յովհաննիսեան Սարաջեան, Գրիգոր և Բաղդատ Գեորգեան Սարաջեաններ, սրտի ցաւով յայտնելով առաջինը իր ամուսնու, երկրորդները իրանց եղբոր, իսկ մերջինները իրանց հօրեղբոր, ԱԼԻՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել վաղը, կիրակի, հոկտեմբերի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի յուղարկաւորութեան հանդիսին, իր սեփական բնակարանից, կօյլ թաղից (Նոյնեայա հրապարակ), տուն Ազ-նաուրովի № 28, դէպի Զիգրաշէնի եկեղեցին: Հոգեհանգիստ այսօր, շաբաթ օր, երեկոյեան ժամը 5-ին: 1—1

Վաղը, կիրակի, 27-ին հոկտեմբերի, հանգուցեալ ԲԱՆՇԻ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՂԻԱՍ-ՋԱՐԵԱՆԻ մահի վաճառակները օրը, Սուրբ Կարապետ եկեղեցում կը կատարվի պատարագ, իսկ հանգուցեալի գերեզմանի վրա, նոյն եկեղեցու պարտաւերում, հոգեհանգիստ: Պատարագի օկիդը 10 ժամին առաւօտեան: Թէ պատարագին և թէ հոգեհանգիստին խնդրում են ներկայ գտնվել ազգականներին և ծանօթներին՝ կատարին Գեորգեան, Վասիլ Գեորգեան Եղիազարեանները և քոյրերը: 1—1

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երևանում հիմնվելի գինեգործական զարդի մասին. Նաւթը. Նաւթի Ներքին-Ազգային. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հոսմի պապը և սօցիալիզմը: Բանկ Օթոմանի առիթով. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՍԳԻՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻՍ

Իսկ Երևանեան նահանգի գինիները կովկասեան գինիների շարքում լաւ տեղ չեն բռնում և որա համար շատ քիչ քանակութեամբ են ծախվում, ոչ միայն նահանգի սահմաններից դուրս, այլ և իր տեղում: Այդ գինիները լինում են փոքր, դաւը և մինչև անգամ չափաւոր գործածութեան ժամանակ շատ վատ են աղբում մարդու օրգանիզմի վրա:

Երևանեան գինու յատկութիւնները ուսումնասիրված չեն, թէ և այդ առթիւ փորձեր են արված, ինչպիսիք են երևում է պ. Վ. Թայրիքեանի «Сельское хозяйство и виноделие» լրագրի 1888 թ. № 12 գիտնական յօդուածից:

Բայց միւս կողմից պէտք է ընդունել իբրև մի անվիճելի իրողութիւն (ֆակտ), որ Երևանեան նահանգի գինիները մեծ քանակութեամբ ալիօս են պարունակում իրանց մէջ, որի պատճառով և աչքի են ընկնում իրանց խիստ թնդութեամբ, այնպէս որ 1883 թ. Մոսկովայում կայացած արդիւնաբերական ցուցահանդէսում գրաւեցին էկսպոնատների ուշադրութիւնը իրանց այդ յատկութեամբ:

Երևանեան գինիների վատ յատկութիւնները աւելի տարօրինակ են և անհասկանալի հէնց այն պատճառով, որ այդ նահանգի այգիները շատ ընտրի և բազմատեսակ խաղողներ ունեն, որոնք իբրև միջդ-դեներտ գնահատվում են նոյն իսկ Թիֆլիսի շուկայում, որը ամբողջ կովկասի խաղողի առևտուրի կենտրոնն է:

Երևանեան նահանգում իր ընտիր և հիւանդի խաղողից ամենահասարակ գինիներ ստացվելու ակամայ ստիպում է զրա պատճառը՝ տեսնել տեսական ազգաբնակչութեան գինին չինելու և պահպանելու համար արհեստական և կատարելագործված միջոցների հետ ծանօթ չը լինելու մէջ: Այստեղ գինին պատրաստելու և ստացած գինին պահպանելու միջոցները միանգամայն նախնական, նահապետական դրութեան մէջ են գտնվում: Մտածելով իմ խնամոցս յանձնված նահանգի

բարօրութեան վրա, եւ կայ այն եղրակացութեան, որ պէտք է օգնութեան հասնել նահանգիս բնակիչներին, միջոց տալով նրանց սովորել գինեգործութեան կատարելագործված և ձեռնառու միջոցների հետ, ոչ թէ թողնել նրանց այդ գործից մէջ և որքան կարելի է շուտ հասցնել այդ օգնութիւնը:

Նորագոյն և արմատական հիմունքների վրա դրված գինեգործական ուսումնարանը միայն կարող է սովորեցնել նահանգի բնակիչներին գինեգործութեան կատարելագործված միջոցները:

Թէ և Երևանեան նահանգում, մասնաւոր յերևան քաղաքում, վերջին ժամանակներս հանդէս են եկել գինեգործներ, որոնք փորձ են փորձել գինեգործութեան մէջ մտնել մի քանի կատարելագործված միջոցներ, բայց և այնպէս այդ դէպքերը ազգաբնակչութեան համար միանգամայն անհետեանք են մնացել, քանի որ դրանք եղել են վաճառականներ և աւելի հետեւելով իրանց մասնաւոր շահերին, իրանց գործը ժողովրդից ծածուկ են պահել:

Բացի այդ, վերոյիշեալ գինեգործները աւելի շահի ետեւից ընկնելով, աշխատել են գինին վաճառել մտաւայ տարիներում և անուշադիր թողնելով երկար ժամանակ գինին հնացնելու գործը, զրա համար փորձել չեն արել:

Այդ իսկ պատճառով այդ պատահական գինեգործների գործունէութիւնից գինեգործական միջոցների զարգացման վերաբերութեամբ ոչ մի բարեբար հետեանք չը սպասելով, եւ հասցալ այն եղրակացութեան, որ Երևանեան նահանգում պէտք է բանալ մի կանոնաւոր գինեգործական ուսումնարան: Եւ որովհետեւ, իմ կարծիքով, գինեգործութիւնը սերտ կապով կապված է գինի պատրաստելու համար աւելի յարմար տեսակների մշակման հետ, ուսումնարանը պէտք է մի այլ նպատակ են ունենայ—այն է՝ սովորեցնել վաղը կանոնաւոր մշակում: Ուսումնարանում պէտք է զարգացնեն խաղողի այն տեսակը, որը աւելի յարմար է գինի պատրաստելու համար և յատկապէս այն տեսակները, որոնք համար տեղական կլիմայական դանաղան պայմանները աւելի նըպաստաւոր կը լինեն:

Երբ որ նահանգի ազգաբնակչութիւնը կը տեսնի, որ գինու համար խաղողի աւելի յարմարաւոր տեսակները զարգացնելու նպատակով գործադրված փորձերը աշխույժ են և այդ տեսակից ստացվում են անհամեմատ բարձր յատկութիւն ունեցող գինիներ, որոնք միշտ արտահանվում են, ինքն էլ գինեգործական ուսումնարանից դուրս եկած աշակերտների միջոցով կարող է խաղողի նոյն տեսակները զարգացնել և աւելի կատարելագործված միջոցներով գինի պատրաստել: Գուցէ և ուսումնարանին կաջողվի նոյն իսկ տեղական

խաղողներից աւելի յարմարաւոր տեսակներ ստանալ:

Ի նկատի ունենալով Երևանեան նահանգում ստացված գինիների թնդութիւնը, կարելի է ասել, որ կը ստացվեն թուշ և թանգ գնահատվող գինիներ, ինչպէս արտասահմանեան վենդեակեան, մադերա, պօրտվէյն, խերէս և այլն. կամ թէ չէ աւելի ձեռնառու կը լինի պատրաստելու, կօնեակ և նոյնանման թուշ խմիչներ: Եւ վերջապէս այդ արդէն ուսումնարանի գործն է կարգադրել իր ապագայ գործունէութիւնը ըստ իր հայեցողութեան: Ինձ մօտ չունենալով ոչ փորձված պարտիզայն—այգեպան և ոչ էլ տեսականապէս և կամ գործնականապէս (պրակտիկական) հմուտ գինեգործներ, ստիպված եմ գիմել Թիֆլիսի կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան, խնդրելով որ նա յանձն առնի պատրաստել կանոնադրութիւնը, շտապը և անհրաժեշտ համարված շինութիւնների յատակագծերը, նոյնպէս կազմել թէ միանուագ և թէ այնուհետեւ պարբերաբար ամեն տարի լինելի ծախքերի հայտները:

Իսկ իմ կողմից միայն հարկաւոր եմ համարում միշտ այն զլխաւոր կէտերը, որոնք ընկերութիւնը այդ հարցի մասին խօսելիս պիտի ի նկատի ունենայ:

(Կը շարունակվի)

## ՆԱԽԻՐ

Այսօր նաւթային արդիւնաբերութիւնը մեր երկրում գտնվում է մի ծանր տագնապի մէջ: Նաւթի պուշն իջել է չը լաված գին, 11/2—21/2 կօպէկ Բագուի մէջ: Ամերիկեան արտադրում է մեղ միջադգային վաճառանոցներից և մասնկութիւնների չարագուշակ հոտը կարծես ծանրանում է մեր երկրի այդ սեպուհ արդիւնաբերութեան վրա... Լաւատեսները հաւատացնում են, որ տագնապը վերջանալու վրա է, որ գործերից կենդանանալու նշաններ են երեւում, սակայն, մեր կարծիքով՝ ամեն ինչ շարունակում է դեռ ևս անյայտութեան մէջ մնալ:

Բագուի նաւթային արդիւնաբերութեան մէջ զրկված կապիտալների գումարն ահագին է, և նրա հետ կապված, նրանից կախում ունեցող մարդկանց թիւն այնչափ մեծ է, որ այս ճգնաժամը ներկայացնում է հասարակական խնդրի կերպարանը:

Պէտք է ուսումնասիրել այդ արդիւնաբերութեան պայմանները և ըննել նրա ներկայ ճգնաժամի պատճառները: Այդպիսով կարելի կը լինի գտնել իրերի այս դրութեան ճշմարիտ դարմանը: Ամեն տեղ, երբ արեգակը զլորվում է հորիզոնի տակ՝ մարդիկ դիմում են արհեստական լուսաւորութեան «խաւարի մէջ չը խաբաւախելու համար»: Այդ նպատակով ամենից շատ տարածված նիւթը՝ նաւթն է, որը գրեթէ բացառապէս Պենսիլվանիան և Ալյաշքոնի թերակղզիներն են մատակարարում ամբողջ երկրագնդին: Բնականաբար, միջադգային հրապարակի վրա Բագուի նաւթը և Պենսիլվանիայի նաւթը մրցում են միմեանց դէմ և էժանը յաղթում է թաղին:

Ուրեմն հարցը գինի մասին է: Յայտնի է, որ ամեն մի ապրանքի գինը և տարածվել կախված են. ա) նրա արտադրութեան արժէքից, այսինքն տեխնիկական պայմաններից, բ) նրա ճանապարհածախսից և առևտրի կաշմաներպութիւնից:

Ինչ վերաբերում է առաջին կէտին՝ թէ և տեղացիներից շատ զովաբանութիւններ են ըսել Բագուի արդիւնաբերութեան «կատարելալ» տեխնիկայի մասին, բայց և այնպէս ոչ մէկին չենք հաւատացել: Այստեղ տեղը չէ ընթերցողներին ճանձրացնել մասնագիտական բացատրութիւններով, բայց պէտք է ասել, որ այդ «կատարելալ» տեխնիկան զգալի կերպով կաղում է, սկսած հոր

փորելուց մինչև գործարանական վերջին գործողութիւնները:

Մենք յաճախ լսում ենք, որ ամերիկացի ճարտարագէտներ, կապիտալիստներ և ճանապարհորդներ են գալիս Բագու՝ մեր նաւթի արդիւնաբերութիւնը ուսումնասիրելու և իրենցից հետ համեմատելու համար: Համեմատութիւնից ծագում է կատարելագործութիւն: Մենք կուզէինք իմանալ, թէ արդեօք Բագուից արքան են գնում Պենսիլվանիա՝ ուսումնասիրելու նպատակով...

Ինչ և իցէ, մենք չենք կարծում, որ տեխնիկայի թուլութիւնն է ներկայ ճգնաժամի պատճառը: Այդ պատճառը աւելի հաւանականութեամբ կարելի է գտնել երկրորդ կէտի մէջ՝ այն է՝ նաւթի ճանապարհածախսի և առևտրի կազմակերպութեան մէջ:

Մրցութիւնը ոչնչացնում է գիւրութեամբ այն արգելքները, որոնք գտնվում են իր ազատ ներգործութեան շրջանի մէջ, բայց երբ այդ արգելքները դուրս են իր ներգործութեան շրջանից, մըրցութիւնը ստիպված է ենթարկվել նրանց աղբեցութեանը և կարող է նոյն իսկ ոչնչանալ:

Այս վերջին կարգի արգելքներին է պատկանում մեր նաւթային արդիւնաբերութեան համար Անդրկովկասեան երկաթուղու տարիֆը: Նա այնչափ արտակարգ կերպով բարձր է, որ մենք դժուարանում ենք ըմբռնել, թէ ինչու չեն իջեցնում: Այդպիսի չափազանց թանգ տարիֆների չնորոյ է բարձրացրել այս երկաթուղին իր տարեկան դուռ օգտուը՝ մինչև 8—10,000 ռուբլու ամեն մի վերստից: Սա մի արտասովոր թիւ է. Ռուսաստանի և ոչ մի երկաթուղին չէ ստանում այդչափ ահագին շահ: Այդ տարօրինակ բաղդը վիճակված է միմային Անդրկովկասեան երկաթուղուն, որը նաւթի ճանապարհածախսի թանգութեան միակ պատճառն է: Իջեցրէք այդ տարիֆը մի քանի կօպէկով, և մըրցութեան հաւասարակշռութիւնը կը վերականգնվի, ճգնաժամը կանցնի:

Այստեղ չենք կարող չը հարցնել, թէ ո՞ր մնաց Բագուից մինչև Բաթում նախագծված նաւթանցքի գեղեցիկ նախագիծը: Ինչո՞ւ են քնացնում նրան արխիւների մէջ, արդեօք զրամալիսի բացակայութեան պատճառով, թէ Անդրկովկասեան երկաթուղու խաթը չը կտրելու համար...

Գալով Բագուի նաւթի առևտուրի կազմակերպութեանը և առհասարակ արդիւնաբերութեան ընդհանուր շահերի պաշտպանութեանը, պէտք է ասել, որ այդտեղ ևս թերութիւններ են նկատվում: Երևակայեցէք, որ միայն այժմ են խելքի եկել մեր նաւթ արդիւնաբերողները և ուզում են կազմել մի սինդիկատ: Ի հարկէ, այդ սինդիկատին մասնակցում են միայն «փոքրերը», իսկ «ջոջերը» յամառութեամբ հրաժարվում են համեմատելութիւնից: Թայեբը միշտ պէտք են ունեցել և կունենան խմբիլու, որպէս զի պաշտպանեն իրանց շահերը թէ օտար մըրցութեան դէմ և թէ ուժեղ հարեանների մըրենայութիւններից:

Մըրենայութիւնների մասին շատ է խօսվում Բագուի և նոյն իսկ մամուլի մէջ, ուր սպաղըրվում է ամբողջ տաւերով և նրանց հեղինակի անունը: Առաջ ենք բերում մինչև անգամ ապացոյցներ...

Այդ մըրենայութիւնների և ապացոյցների մասին վիճաբանելը մենք կը թողնենք նրանց, որոնց այդ հարցը հետաքրքրում է աւելի մասնաւորապէս: Բայց մենք չենք կարող չը դարմանալ «Касиш» լրագրից, որը, պաշտպանելով մի ֆիրմա, կեղծ դրութեան մէջ է դնում իրան, երբ ասում է. ներկայ տագնապի պատճառը՝ նաւթի չափից դուրս շատ արտադրութիւնն է (перепроизводство): Մի և նոյն լրագիրը նոյնպէս չէ կարողանում հասկանալ և ողբում է, որ նաւթից վաստակած փողը փոխանակ զրպանները դնելու՝ բաղուցիք գործ են ածում նոր նաւթահորեր փորելու համար: Իսկ մենք կը վերջացնենք մեր այս կարճ

Նկատողութիւնները, թողնելով «Բազմի»-ի ար-  
ցունքները ցամաքեցնելու հոգսը Անդրկովկասեան  
երկաթուղուն և մեր նաւթի արդիւնաբերողների  
զգաստութեանը...

Թիֆլիս.

Հանքային խմբեր

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԽՍԻՑ

Հոկտեմբերի 15-ին

Տեղիս միջատեան երկսեռ դպրոցների կանոնա-  
ւոր դաստառութիւնը սկսել է հոկտեմբերի 3-ից:  
Այսքան ուշ սկսվելու պատճառն այն էր, որ ու-  
սումնարանի շինութիւնը վերանորոգում էին:  
Ապտեմբերի 6-ին արդէն վերանորոգութիւնը  
վերջացած էր, մնում էր միմիայն լուսամուտնե-  
րը, դռները և մանկավարժական պահանջներին  
համեմատ չլինած նոր ձևի նստարանների ներկել  
տալը. դա արգելք եղաւ ուսումնարանական պա-  
րպմունքներին: Նստարանները չլինած են եր-  
կու հոգու համար և յարմարեցրած են երեխանե-  
րի հասակին: Դպրոցի շինութիւնը բաւական  
յարմար է. բաւարար լուսով, ընդարձակ, չոր և  
մաքուր, մի խօսքով թէ արտաքուստ և թէ ներ-  
քուստ, իբրև մի գիւղական դպրոց, շատ չքեղ է:  
Ներթափանցող լուսումնարանները ապահով-  
ված են, այնպէս որ տարեկան ծախսը դուրս  
գալով, մուտքից մի փոքրիկ դուռար էլ աւելա-  
նում է դրամադրի վրա: Ուսուցիչները կանոնա-  
ւոր կերպով ստանում են առձինները. եթէ կա-  
րէք լինի, երեք ամսվայ առձինը կարող են ստա-  
նալ միանգամից:

Տեղիս ուսումնարանների աշակերտ-աշակեր-  
տուհիների թիւը հասնում է 50—60-ի, իսկ ամե-  
նաշատ տարին հասն է 70-ի: Աշակերտների թի-  
ւը հետզհետէ պակասում է և դրա պատճառը հե-  
տեան հանգամանքներն են. ա) այստեղ կան  
1 հատ բոժոժից թիւը քաջելու և 7—8 հատ էլ  
թիւը յետ տալու և որոշեալ գործարաններ, որոն-  
ցից իւրաքանչիւրի մէջ աշխատում են 15—20  
բանւորներ: Այդ բանւորների մեծամասնութիւնը  
աղքատ աղաներ և օրիորդներ են, որոնց ծնող-  
ները փոխանակ մի քանի թուրքի տալու դպրո-  
ցին, կամ ձրի ուղարկելու, լաւ են համարում  
գործարաններում բանեցնել և ամսական 3—4—5  
թուրքի ստանալ և իրանց ցածրը հոգալ: Բ) Սո-  
վորութիւն է դարձել, որ տղան 10—14 տարե-  
կան է դառնում թէ չէ, ուղարկում են օտարու-  
թիւն. հարուստները ուսում առնելու, կամ վա-  
ճառականութեամբ են պարագեցնում, իսկ աղ-  
քատները ասում են. «է՛հ, տղայ է, թող գնայ  
համ գլուխը պահի, համ էլ մի բան սովորի»: Գ)  
Մինչև վերջին տարիներս ազուլեցիք, որոնք զը-  
նում էին օտարութիւն առնողներով, կամ ուրիշ  
գործով, իրանց ընտանիքը թողնում էին գիւղում  
և 2—3—4—5 տարին մի անգամ վերադառ-  
նում էին տուն. իսկ այժմ սկսել են ընտանիքով  
զաղթել ուրիշ քաղաքներ, դրա համար էլ գիւղի  
բնակիչների թիւը զգալի կերպով պակասում է:

\*\*\*

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«С.-Петербургск. Сенатскія Вѣдомости» լրա-  
գրի № 82-ի մէջ (ուրբաթ, 11 հոկտեմբերի), կար-  
դում ենք հետեւել Բարձրագոյն հրաման: «Թա-  
գաւոր կայսրը սեպտեմբերի 19-ին, ներկայ 1891  
թվի, Բարձրագոյն հրամայել բարեհաճել է իշխա-  
նի հայրուստւորչական սինոդի անդամներին,  
Սուրբատ եպիսկոպոս Պարզեանին, որը մի և նոյն  
ժամանակ փոխանորդ է երեւանեան թեմի,  
և Ներսէս եպիսկոպոս Խոնդավերդեանցին,—արձա-  
կել իրանց բոլոր պաշտօններէն»:

Նոյն լրագրի նոյն համարում տպւած է և հե-  
տեւել Բարձրագոյն հրամանը. «Թագաւոր կայսրը  
ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զե-  
կուցման հիման վրա, սեպտեմբերի 19-ին ներկայ  
1891 թվի, Բարձրագոյն հրամայել բարեհաճել է  
հաստատել հայ-լուսաւորչական եպիսկոպոսներին,  
Արիստակէս Սեղրակեանին, Գրիգորի Աղուանեա-  
նին և Բարդուղիմէոս վարդապետ Գեորգեանին,—  
Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամ-  
ներ»:

Հինգշաբթի հոկտեմբերի 31-ին Թիֆլիսի ար-  
քուեպիսկոպոս թատրոնում հայոց դերասանական  
խումբը կը ներկայացնէ «Արշակ Բ.» դրաման,  
նոր կարգ ու արքով: Կը մասնակցեն զինուորա-

կան երաժիշտների երկու խմբեր, երգիչների  
խումբ և 100-ի չափ գործող անձինք:

Երկուշաբթի, նոյեմբերի 4-ին, Աղսաւանների  
Բանկի թատրոնում հայոց դերասանական խումբը  
կը ներկայացնէ «Որումն չարիք» նոր պիէսան,  
յոգուտ Ռուսաստանի սովետների:

Մեզ խնդրում են յայտնել, որ հայոց դերասա-  
նական խումբը պատրաստում է հետեւել պիէ-  
սաները. 1) Հրէուհի, 2) Մանկութիւն, 3) Սէվի-  
լիայի սափրիչ, և այլն: Նոյեմբերի 14-ին կայանա-  
լու է դերասան Թուրեանի նպատակին մի ներ-  
կայացում:

Տպելով մեր անցեալ համարում Թիֆլիսի Հայու-  
հայ Բարեգործական ընկերութեան շնորհակա-  
լութիւնը պ. Ստեփան Ղամբարեանին նրա 200  
թուրքի նուէրի համար, պարտք ենք համարում  
յիշեցնել, որ ինչպէս յայտնի է, տեղիս նախկին  
առաջնորդ Արիստակէս Սեղրակեան եպիսկոպոսը  
առաջինը եղաւ, որ աշխատեց այստեղի ժողովը-  
ղի մէջ արմատացած քէլէի (մեռելահաց) տա-  
լու մեծածախս և վնասակար սովորութիւնը վե-  
րացնել: Այն ժամանակ սրբազանը դիմեց և քա-  
ղաքի բարձր դասակարգի տիկիներին օգնութեա-  
նը, որոնց վարմունքը օրինակ է դառնում և հա-  
սարակութեան: Այս նպատակով հրաւիրված կա-  
նանց ժողովը, համակրելով առաջնորդի առա-  
կութեան մէջ, որ քէլէի ծախսը նուէրով մի որ  
և իցէ բարեգործական նպատակին: Այս տեղից  
սկիզբն առաւ տեղիս քանանների ապահովու-  
թեան դաժնարանը, որն արդէն բաւական առաւ  
է գնում: Գործիս սկզբնական համակողմը և ա-  
ռաջին ստորագրողը եղաւ այժմ հանդուցեալ  
տիկին Նունէ Ղամբարեան, ի յիշատակ որի,  
քէլէի փոխարէն, իր ամուսինը նուէր էլ է այժմ  
200 թուրքի Հայուհայ ընկերութեան և 100  
թուրքի քանանների վերադիւրեւ գաժապահի: Այս  
կարճ միջոցում, միմեանցից օրինակ առնելով,  
արդէն Թիֆլիսի մի քանի նշանաւոր հայ ընտա-  
նիքներ նոյնպէս նուէրաբերութիւններ արին, քէ-  
լէի փոխարէն, քանանների գաժապահին և  
Բարեգործական ընկերութիւններին: Օրինակ, եւան-  
գուհեան, Ալիսանեան, Վ. Թամաշեան, Մա-  
մասալիսեան, և այժմ Ղամբարեան և այլն:  
Ցանկալի էր, որ այս օրինակին հետևողները օրից  
օր շատանային, ոչ միայն բարձր դասակարգի  
մէջ, այլ և միջին և մասնաւոր ստորին դասա-  
կարգերում: Այսպիսով կը պակասէին անմիտ,  
չուսյալ և աւելորդ ծախսերը:

Կ. Պոլսի հայոց լրագրիները հաղորդում են, որ  
Կ. Պոլսի հայոց պատրիարքը պաշտօնապէս դի-  
մեց Էջմիածնի կաթողիկոսական տեղակալին,  
խնդրելով որ շուտով նշանակվեն պատգամաւո-  
րական ընտրութիւնների թիւրբաց հայերի մէջ,  
որպէս զի թիւրբաց հայերն էլ կարողանան մաս-  
նակցել ամենայն հայոց կաթողիկոսի ընտրու-  
թեանը, ուղարկելով Էջմիածին իրանց պատգա-  
մաւորները:

«Արձագանք» շաբաթաթիւերը հաղորդում է,  
որ Կ. Պոլսի «Արեւիկ» լրագիրը զաղարկեցած է  
թիւրբաց կառավարութեան հրամանով անորոշ  
ժամանակով: Դադարման շարժառիթը, ինչպէս  
հաւատացնում են, «Արեւիկ» տպւած մի յո-  
ղուած էր, որի մէջ այդ լրագիրը լքողումը թղ-  
թակիցը խօսում է առեւտրի անկման մասին իւ-  
զրումում և այդ անկման պատճառների մասին:

Կովկասեան իրաւաբանական ընկերութիւնը  
այսօր, շաբաթ օր, հոկտեմբերի 26-ին, նիստ  
կուրենայ Թիֆլիսի նախագահական դատարանի  
դահլճնից միմեան: Բացի ընթացիկ հարցերից,  
բժիշկ-պսիխատր Պալլոսկի կը կարդայ այդ  
նիստում մի հետաքրքիր դեկուցում «Յանցաւոր  
ներշնչման մասին» (О преступномъ внушеніи):  
Սկիզբը 8 ժամին երեկոյան: Թղթ է արվում  
նիստին ներկայ գտնվել և կողմնակի անձանց:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան  
պ. պ. անդամները հրաւիրվում են ընկերութեան  
նիստին, որը կայանալու է երեքշաբթի օր,  
հոկտեմբերի 29-ին, երեկոյան 7 1/2 ժամին: Բա-  
ցի ընթացիկ գործերից, կը կարդալվեն զեկու-  
ցումներ. 1) ընկերութեան վերաստուգող մաս-

նաժողովի և 2) Թիֆլիսի աղբգործական դպրո-  
ցի: Նիստին կարող են ներկայ գտնվել և կող-  
մնակի անձինք:

Շուտով լույս կը տեսնի պ. Նազարեանցի տպա-  
րանից «Էվլիկան» վերնագրով Գրիգոր Արծրու-  
նու վէպը, առանձին գրքով: Գրեւ նշանակված  
է 50 կոպէկ, պատի ծախսով հանդիւր: Կը ծախ-  
վի «Մշակ» խմբագրատանը և խիզէկէի գրա-  
վաճառանոցում: Կոմիտայով գաւառներում ծա-  
խելու ոչ մի տեղ ուղարկվելու չէ գրքից, այլ առ-  
նել ցանկացողները կարող են մեղ դիմել: Գրքից  
մի հատ առնողը կարող է վճարել պատի մարկա-  
նեղով, իսկ աւելի մեծ քանակութեամբ առնողը  
թղթագրամով:

Հինգշաբթի, 24-ին հոկտեմբերի, Թիֆլիսի մեծ  
թատրոնում հայոց դերասանական խումբը ներ-  
կայացրեց Շէկսպիրի «Մի կնոջ սանձահարումն»  
յայտնի պիէսան: Գերասանները նախ դերերը չը  
գիտէին և ապա նրանցից իւրաքանչիւրը իր դե-  
րը կարծես դիտմամբ չափազանցում էր: Տ. Սի-  
րանուշ, մանաւանդ, չափազանցում էր, բնմի  
վրա պատէ պատ էր ընկնում, կրկին շուտաւե-  
րակներով էր խօսում: Միւս դերասանները մեծ  
մասը, ընդհակառակն, այնպէս դանդաղ էին խօ-  
սում, կարծես իւրաքանչիւր բառից յետոյ կէտ  
էին դնում: Արեւիկեանցի և Աղայեանցի դիպիկա-  
նա էր: Պետրոսեան, որը զիւրաւոր դեր էր խա-  
ղում, թէ՛ն վատ դիպիկա չունէր, բայց խառնում  
էր հայոց բառերը, և շարունակ իր ն. տառը  
անտեղի կերպով ամեն մի գոյականի ետեւից էր  
կցնում: Թատրոնը գրեթէ լի էր: Առհասարակ  
Շէկսպիրի այդ պիէսան մեր դերասանների ոյժե-  
րից վեր է:

Պետերբուրգի տնտեսագէտների ժողովում, որ-  
պէս հաղորդում է «Новості» լրագիրը, Մուսիկ-  
կի մի դեկուցում է կարդացել Ռուսաստանում  
եղած սովի պատճառների և դրան առաջն առ-  
նելու միջոցների մասին: Պ. Մուսիկիկի, բացի  
քնական պատճառներից, օրինակ անձինք և  
այլն, որոնք մարդու կամքից դուրս են, սովի  
զլխաւոր պատճառ համարում է հացի արտադա-  
նութիւնը: Մինչև քառասնական թաւանները  
հացը 25 միլիոն պուդից աւելի չէին արտահանում.  
ճորտերի աղատութիւնից յետոյ հէնց առաջին  
տասնամակում արտահանութիւնը քառասուն-  
կից, այսինքն 90 միլիոն պուդ հաց արտահան-  
վեց, և հետեւել տարիները աստիճանաբար սկը-  
սեց անել արտահանութիւնը, իսկ 1883—87  
թեւրին հացի արտահանութիւնը հասնում էր ար-  
դէն մի խոշոր թիւի, այն է 327 միլիոն պուդի:  
Դրանից ինչ կարելի է եզրակացնել: Այն, ասում  
է դեկուցանողը, որ այդ միլիոնների թիւում Ռու-  
սաստանից արտահանման է ուղարկվում ոչ թէ  
աւելորդ հաց, որը Ռուսաստանում երբեք չէ կա-  
րող լինել, այլ մնացորդը, որը անհրաժեշտ է  
դաշտերը սերմանելու համար:

Չորեքշաբթի, ամսիս 23-ին, Թիֆլիսի արքու-  
եպիսկոպոս թատրոնում տեղի ունեցաւ տեղական ոյ-  
ժերից կաղմակերպված օպերայի երկրորդ ներ-  
կայացումը: Այս անգամ ներկայացնում էին վէր-  
դիի «Բիթլետո» օպերան, որի մէջ մասնակցում  
էին պ. Նիկողայեան, տ. Բէնուօլա, պ. պ. Ա. Ֆրի-  
կեան, Կորիճէ, Ֆրանկօսկի, օր. Ալմազեան և ու-  
րիշներ: Բիթլետո (Նիկողայեան) խիստ աջողու-  
թեամբ և հիմնալի կերպով կատարեց իր դերը,  
թէ ձայնի և թէ նոյն իսկ դրամատիկական կող-  
մից: Տիկին Բէնուօլա երգում էր Չիլդային և  
այդ երկու նոյնպէս աջողութիւն ունեցաւ և ան-  
դադար ծափահարվում էր: Ա. Ֆրիկեան (հերցօգը)  
երգում էր ոգեւորված: Թատրոնը կատարելապէս  
լի էր և, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ  
չը կար: Որկեսորը զեկավարող իպպօլիտօվ-իւ-  
նով մի քանի անգամ արժանացաւ հասարակու-  
թեան ծափահարութեան: Եւ անա ընկերական ոյ-  
ժերով օպերա կաղմուկ փորձն աջողութիւն է  
գտնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՈՍՄԻ ՊԱՊԸ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Թէ՛ն Ֆրանսիացի ուխտաւորների հետ Հռոմում  
պատահած անցքը ունի քաղաքական նշանակու-  
թիւն, սակայն նա ուրիշ կողմից միջոց տուեց

Հռոմի պապին բացարձակապէս իր կարծիքն ար-  
տայայտելու եկեղեցու դիրքի մասին ժամանակա-  
կից սօցիալիզմի վերաբերմամբ: Ինչ տեսակ ա-  
նուն էլ կրէ այդ սօցիալիզմը, այժմ այլ ևս կաս-  
կածել էլ չէ կարելի, որ Լեոն XIII պապի կար-  
ծիքով սօցիալիզմը երդուեալ թշնամի է թէ՛ եկե-  
ղեցու և թէ՛ ժամանակակից պետութեան: Այդ  
միջոցը պապը յայտնել է այն ճառարխօսութեան  
մէջ, որ նա ուղղել է կղերական պատգամաւորնե-  
րին և յատկապէս Մուն կոմսին: Պապը ուրա-  
նում է նոյն իսկ «քրիստոնէական սօցիալիզմի»  
դոյութիւնը, որ շատերը ջանում էին առաջարկել  
որպէս հակակշիռ ընդհանուր սօցիալիզմի վար-  
դապետութեան. նա յայտնեց, որ եկեղեցին ու-  
րիշ միջոց չէ ճանաչում չքաւորութեան դէմ մա-  
քառելու, բացի անձնական ոգորմութիւնից, վեր-  
ջապէս եկեղեցին, Լեոն XIII-ի կարծիքով, իր  
անհատական բնաւորութիւնը պահպանելով, չէ  
ընդունում հաւաքական գործողութիւնը արաւա-  
տական և սօցիալիստ կուսակցութիւնների, ու-  
րանում է ընկերութիւնների դրական օգուտը  
ստորին, բանւոր դասակարգի չքաւոր դրութեանն  
օգնելու նպատակով:

Պապը է, որ պապի այդ յայտնութիւնները ա-  
նադին ներգործութիւն կուենան կաթօլիկ եկե-  
ղեցու կղերի վրա ամբողջ Եւրոպայում: Եւ եւրո-  
պական կաթօլիկ այն հոգևորականները, որոնք  
արդէն հակվում էին դէպի հաշտութիւնը սօցիա-  
լիզմի հետ, գոնէ «քրիստոնէական սօցիալիզմի»  
ձևով այժմ պապի խօսքերից յետոյ՝ երկի յետ  
կը քաշվին, կը հրաժարվին իրանց համոզմունք-  
ներէն: Մեծ քաղութիւն հարկաւոր կը լինի ունե-  
նալ, օրինակ, Մանինը կարդինալին շարունակե-  
լու համար իր այն մտքերը քարոզել, որ նա տա-  
րիններից ի վեր դաւանում էր, պաշտպանելով  
այն կարծիքը, որ ժամանակակից մարդկային հա-  
սարակութեան կաղմակերպութեան փրկողը մի-  
այնպէս պետական սօցիալիզմը կարող է լինել:

Իսկ գերմանական կղերականները պապի խօս-  
քերից յետոյ, կարծիք չը կայ, որ բոլորն էլ կը  
հրաժարվին որ և է յարաբերութիւնից սօցիալիզմի  
հետ: Նոյնը կանէն, երեի եւրոպական ուրի  
երկրներին կղերականները:

ԲԱՆԿ ԾԹՕՄԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Կրթական խնդրին մէջ ևս «Հայերն» կը  
հանդիսանայ իւր աղատ բեմ մը, ուրկէ ազգին  
կը խօսին ամէն անոնք որք թէ գաւառներու մէջ  
և թէ ի Պոլսի իրենց հոգածութիւնը կը նուրիւն  
մեր կրթական գործին: Իրարու հակառակ համո-  
զումներ այս էջերուն մէջ յայտնուեցան, կը յայտ-  
նուին ու պիտի յայտնուին: Կարծես թէ կրթ-  
թեան ու դաստիարակութեան ժողովի մը առ-  
նագրութիւններն արձանագրող եղաւ «Հայերն»:  
Այս եղանակաւ միայն հնարաւոր կը համարվե-  
րնդհանրութիւնը լուսաւորել, և կրթական խնդր-  
ները տեսականէն գործնականի անցնել:

Այս նիւթին վրա ամէն խորհողի ու գրողի  
մտածանքութիւնն է թէ՛ ինչ պիտի ընէ տղան  
դպրոցէն ելլելէ վերջ: Այս այնպիսի խնդիր մը  
է որ նոյն իսկ Եւրոպայի ամենէն զարգացած ա-  
գերուն ալ յարատեական մտածանքութեան  
ռարկայն է:

Պոլսոյ տղոց ապագային համար կը մտածե-  
րելու միջոց. կամ այնպիսի կրթութիւն մը ի  
որ տղան դպրոցէն ելլելուն պէս իր միջավայր-  
մէջ եղած գործերն մէկուն յարմարի, և թոր  
մանէ անմիջապէս. պղտիկ ըլլայ, մեծ ըլլալ  
գործը, ապագայ ունենայ չունենայ այդ ամէնը  
հոգ չէ, գործ ըլլայ, հացին ստակն հանէ, այդ-  
նը կը բաւէ:

Կամ թէ՛ տալ այնպիսի կրթութիւն մը որ  
տղան ինք կարող ըլլայ, մինչև իսկ հարկադրու-  
թեամբ ստեղծել, հոգ չէ թէ կենքերն առաջին քա-  
րիններուն բան մը չը կրնայ ընել, բայց իր ինք-  
բովը, ստացած կրթութեամբն ու գործունեու-  
թեամբը կարենայ ինք բան մը ընել, և ոչ թէ  
բոլոր յոյսն ու փափաքն ըլլայ վաճառականի մը  
բով գորգիւր ըլլալ:

Առջեկիս ժամանակ ունինք ատենք վրայ մտա-  
ծելու: Տարակոյս չը կայ թէ՛ ամենքին փափա-  
քելու ենք որ մեր տղաք արդարեւ կարող ըլլան  
ինքնիրենին բան մը ըլլալ, բան մը ընել, և  
կրթութիւնն ալ անոր համեմատ տանք. բայց  
մեր Պոլսական բարքերը կը կաշկանդեն զմեզ  
այսպիսի դադափառներու գործողութեան արիա-  
բար դիմելու. թէպէտեւ մեր տուած կրթութիւնն

առանց մեր զգալուն քիչ մը կը դիմէ այս նպատակին, բայց շատ անկարգ կերպով:

Անոնք որ կուզեն աշակերտները տեսնել, դըպրոցէն ելլելէ վերջ, անմիջապէս վաճառատան մը մէջ պաշտօնի անցած, այդպիսիներու ուշադրութիւնը կը հրաւիրենք Պանք Օթոմանի Տնօրինութեան տուած նոր որոշումներուն վրայ:

Երբեք չենք մեր խօսքը վերջնական տեսակէտէ պահելով: Սակայն մեր խօսքը միայն միայն նա կոչուած, այլ և մեծ բարեփոխութիւն մը առաջ կուգայ այդ դրամական պաշտօնէից բարձրութիւն մէջ, բարեփոխութիւն որուն աղիւսը իրենց կը տարածուի միայն այդ պաշտօնէից ընտանեաց, ազգականաց և բարեկամաց շրջանակներուն վրայ, և կրնանք ըսել մինչև իսկ անոնց աղիւսը վրայ:

Պանք Օթոմանը մեծ դիրք մը գրաւած է ի Թուրքիա. երբեք չենք ամենազօրաւոր դիրք ունեցած էին այդ հաստատութեան մէջ, բայց յետոյ դանազան պատճառներով տկարացան: Այնուհետև ևս չենք շարունակելիս Պանք Օթոմանի մէջ բաւական թուով ըլլալ, բայց ոչ ինչպէս երբեք էին:

Այդ բարձրութիւն չափերուն մէջ, կը գտնուէին շատ քիչեր որք իրենց մտաւոր կարողութեամբ յառաջացած ըլլալին կամ յառաջանալու ոյս ունենային. ոմանք իրենց երկարաժամանակեայ հաւատարմութեամբ ծառայութիւններովը հաստատուած ֆաշին իրենց պաշտօններուն մէջ, իսկ ուրիշներ միայն իր ջնտրեց ընդունեցան իրենց փոքր ինչ յառաջադիմութիւնը: Պանքայի նախկին տնօրինութիւնը շատ պարագայներու մէջ շատ աղիւսէր, այլ կը քաջալերէր, առաջ կը քշէր պաշտօնականները ոչ թէ իրենց տաղանդին կամ աշխատութեան համար, այլ ուրիշ դանազան պատճառներու համար, և տեսանք հայ պաշտօնականներին կատարելապէս ոչնչութիւններ որք դիրք մը գրաւեցին. իսկ անոնք անոնցմէ շատ բարձր եղող հայերը մնացին խոնարհ կացութեան մէջ: Ամէն ինչ համոզուեցաւ թէ՛ զարգանալ մտքով, աշխատել եռանդով անօգուտ էին յառաջանալու համար ասպարէզին մէջ, պէտք էր շնորհ ինչոքը:

Պանքայի նախորդ վարչութիւնը քաջալերեց արագ Ժողովութիւնը, և վստահեցուց աշխատակիցներին. չայլերն ալ այս փաստակարար աղիւսութեան ներքեւ գտնուած են, և դայն տարածեցին իրենց շրջանակներուն մէջ:

Սակայն այսօր Սըր Էտկար Վինսնդի վարչութիւնը կը հետեւի բոլորովին տարբեր ուղիով: Բարեփոխութիւնն ու շնորհքն է որ յառաջադիմութեան անհրաժեշտ պայման կը համարուին, այլ տաղանդ ու աշխատութիւն:

Այժմ ամէն անոնք որ մտքով զարգացած են, իրենց արուեստին մասնագիտութիւնն ունեն, և աշխատելու փափագող են և կարող, վստահ են թէ պիտի կարենան ունենալ լաւ ներկայ մը և լաւագոյն ապագայ մը: Իսկ անկարողներն ու ծովերը սրտադրող մէջ են:

Որոշան լուրերը ցոյց տուին թէ՛ սըր Էտկար Վինսնդի ոչ բարեփոխութեան կը նայի, ոչ աղիւսութեան և կրօնի. մրցումը միակ ճանապարհն է որով կրնայ ամէն թուրքիացի մտնել Պանք Օթոմանի մէջ երբ պաշտօնի պէտք կայ, մրցումը որ պիտի առաջացնէ պաշտօնի վրայ գտնուողներն:

Այսպիսի վիճակի մը մէջ մենք շատ պարզ բան մը ունինք ընկու. անոնք որ կը փափագին ամականաւոր պաշտօնեայ ըլլալ, գրագիր ըլլալ պէտք է դպրոցէն պատրաստուին մասնակցել Պանք Օթոմանի քննութեանցն ու մրցմանց:

Դպրոցի տեսուչներն, որք գրագիրներ պատրաստելու ծրագիրներ ունին, պէտք է որ նկատուողութեան առնեն թէ՛ ինչ կը պահանջէ Պանք Օթոման գրագիր մը: Գրագիրը թող պատրաստուի Պանք Օթոմանի պահանջներուն համաձայն. այն ազան որ դպրոցէն կը ելլէ և լաւ սորված է ծրագրին պարտաւորելը ըրած առարկայները, կրնայ յուսալ թէ՛ ապագայաբար կարող է որ մը Պանք Օթոմանի մէջ տեղ ձեռք ձգել:

Պէտք է աչքէ վրիպել, որ այդ Հաստատութիւնն որ ըստ օրէ կընդարձակէ իր գործառնութեան ասպարէզը, կը տարածուի Տաճկաստանի մէջ ամէն կողմ. կարող է իր պաշտօնականները, երազային ընկեր, ինչպէս կընեն ուրիշ հաստատութիւններ, պէտք ունի տեղացի տարերքներու, և տեղացի տարերքներու մէջ հայերն են, որ ամենէն աւելի յարմար են իրենց ընտանիք

կարողութեամբ գոհացնել Պանք Օթոմանի պահանջները, եթէ այդ հայերը կրթութիւն այդ պահանջներուն համեմատ:

Իրաւ է որ Պանք Օթոմանը հաւանօրէն կարող չըլլայ երկար առնեն, զուցէ երբեք, ընդունիլ այն ամէն հայ երիտասարդներն, որք կրնան իրեն գոհացում պատճառել: Սակայն այն հայ երիտասարդներն, որք Պանք Օթոմանի պահանջներուն կարող են գոհացնել, կրնան նաև աւելի զիւրաւ ուրիշ գործեր գտնել իրենց սորվածովը, քանց թէ իրենց հիմնական անկանոն ուսումովը:

Վերջապէս եթէ զօրադրութիւն մըն է, որ մեր դպրոցները գրագիրներ պատրաստելու հարկին մէջ են մեծ մասամբ, գէթ այդ պատրաստութիւնը չենք ուրիշ ուղիով ըլլալ. և ասոր ալ պայմանն է նպատակ մը ունենալ աչքի առջև և այդ նպատակին համեմատ աշխատել:

Ամեն պարագայի մէջ ինչ որ ունին մեր աշակերտները Պանք Օթոմանը մտնելու համար այդ կրնայ իրենց ծառայել ապագային կեանքի զանազան պարագայներու մէջ:

Իսկ Պանք Օթոմանին վարչութիւնը կարծենք թէ՛ մի քանի նոր անօրինութիւններ ալ պէտք է ընէ որպէս զի ապագային ունենայ լաւ պաշտօնականներու բանակ մը:

Պէտք է որ Պանք Օթոման ինքն իր ձեռքովը պատրաստէ իր պաշտօնականներն: Եթէ Պանք Օթոման ուզէ որ քննութեան ու մրցման ներկառու անձեր եղած ըլլան, ինքզինի մը հետ վագած կըլլայ. քիչ կը գտնուին այնպիսի անձինք, որք գործի մէջ մեծցած, փորձառու եղած ըլլան և պարագայ մնալով ներկայանան Պանք Օթոմանին: Երբեքն կը գտնուին այնպիսիներ բայց ոչ միշտ, ոչ ալ յաճախ. պարագայ մնացողներն ընդհանրապէս անկարողներն են:

Պանք Օթոմանը թէ՛ իրեն և թէ ժողովրդին լաւ ծառայութիւն մը կը մատուցանէ եթէ որոշեալ ժամանակներու մէջ, որոշեալ թուով շնորհաւորներ քննութեան հրաւիրէ, և անոնց մէջէն ընտրէ պատանիներ որք գոհացուցիչ կերպով քննութիւն անցուցած են: Այդ պատանիներն եթէ քիչ եմսակալով մտնեն պանքային մէջ, կրնան իրենց թէ՛որով սորվածները բարձր գի մտնել և քիչ առնեն կատարելապէս վարչութիւն կուսակցան ամեն տեսակ գործի որ կարելի է Պանքային մէջ:

Աշակերտ մը որքան ալ լաւ թուաբանութիւն սորված ըլլայ դպրոցին մէջ, որքան ալ աղէկ կերպով պատրաստուած ըլլայ լեզուներու, սակայն երբ գործի մասն կարող չէ վստահօրէն, արագաբար հաշիւ մը ընել, և ոչ ալ շուտ համակ մը խմբագրել: Բայց գործի մէջ պատանիք վարժուելով — բաւական է որ հիմնական ծանօթութիւններուն լաւ տեղեակ եղած ըլլան — քիչ առնեն մէջ լաւ գրագիրներ, ասպարէզակներ կը դառնան և միանգամայն գործի մարդ կըլլան:

Եթէ Սըր Էտկար Վինսնդի եթէ այսպիսի նորութիւն մըն ալ ներմուծէ Պանքային մէջ, ընդհանուր գոհունակութիւն պիտի պատճառէ ժողովրդին:

Ամէն պարագայի մէջ մենք կը յանձնարարենք մեր դպրոցական հոգաբարձուներուն որք «վաճառականական մարդեր» պիտի պատրաստեն, գէթ իրենց ուղեցոյցն ընեն Պանք Օթոմանը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Պարիզից հեռագրում են, որ հասարակական աշխատանքների միջինար Գիւո երկաթուղիական տէխնիկներից մի յատուկ յանձնաժողով է կազմակերպել երկաթուղիական յաճախ կրկնվող աղետների պատճառները քննելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:

— Թիւրքաց կառավարութիւնը տեղեկութիւններ է ստացել, որ Մահադեհիյում գործողացել է բոլորական աղիւսը: Թիւրքաց կառավարութիւնը շատերին կարանատրել է:

— «Times» լրագրին Լոնդոնից հեռագրում են, որ երկարատև և յորդաւատ անձրևներից յետոյ Թեմ-գա գետի մակերևոյթին այնքան բարձրացաւ, որ ջուրը հեղեղեց Վինդորտան պարիզ և խոնարհ կիւր չընկաներ:

— Եւրոպական լրագիրներին հաղորդում են, որ սուլթանը հրամայեց ոչ ղըին այլ ևս արտօնութիւն չը տալ երկաթուղիներ կառուցանելու Ասիական Թիւրքիայում, մինչև որ մի որ և իցէ

անձն չի յանձն առնի Կ. Պոլսի և Բաղդադի մէջ գէպի Պարսից ծոցը երկաթուղի անցկացնել: Անգլիացի Ջոն Ստանիֆորտ մի մեծ ընկերութիւն է կազմել, և կամենում է յանձն առնել այդ երկաթուղու կառուցումը և արդէն ինքիբերով դիմել է Բ. Դրանը:

— «Figaro» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է յայտնի աւագակ Աթմասի նոր քաղաքորոշութիւնների մասին: Այս անգամ աւագակը իր գործունէութեան ասպարէզը ընտրեց Կ. Պոլսի շրջակայները: Նրա քաղաքորոշութեանը զոհ գնաց իշխան Աղէմար Սափէան՝ Կ. Պոլսի ուսուղեսպանութեան անդամներից մէկը: Իշխանը հրաժարեց եղած ասպարէզը իր կալուածքի մէջ, Սան Ստեֆանոսում, ուր 1878 թ. իր թիւրքերի և և ուսուցիչի մէջ կայացած խաղաղութեան դաշնագիրը ստորագրեց: Իշխան Սափէան հին հայկական ընտանիքիցն է ծագում. նրա թաղումը կատարվեց Կ. Պոլսում, բոլոր զիւլումասները և Բ. Դրան մեծամեծ պաշտօնականների ներկայութեամբ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 հոկտեմբերի: Արդարադատութեան միջնատրի օգնականի պաշտօնը, մինչև նորի նշանակելը, ժամանակաւորապէս կը կատարէ զէպարամմէնտի դիրկտոր Կրասովսկի:

ՍՊԱՍՈՎ-ՍԿԻՏ, 23 հոկտեմբերի: Երէկ, առաւօտեան 10 ժամին ժամանեցին այստեղ Նոցա կայսերական Մեծութիւնները Օգոստոսիա Նրեխանց հետ, դանիական թագաւորական դոյզը և Ուէլսի իշխանուհին իր աղջկանց հետ: Գնացքը կանգ առաւ ուղիղ այն տեղում, ուր գնացքի կործանում պատահեց: Բարձր ճանապարհորդները

տեսան մատուռը, կառուցանվող տաճարը և Սպասով-Սկիտի տաճարը, ուր Ամբրոսիոս արքեպիսկոպոսը ողջունեց թագաւոր Կայսրին մի քարոզով: Առաւօտեան 11 ժամին կայսերական գնացքը ուղևորվեց դէպի հարաւ:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 23 հոկտեմբերի: Կայսերական գնացքը մօտեցաւ Կէսարին սեփաւորապետ կայաւանին և շարունակեց ճանապարհը մինչև Արքայական նաւահանգիստը, որտեղ կանգնած էր կամաւոր նաւատորմի «Орелъ» նաւը և «Ермекъ» չորեքնաւը: Նաւահանգիստը շքեղ կերպով դարձաւ և արեւադարձային բոյսերով և զիրանգանքով: Դէպի կայսրանը և նաւահանգիստը տանող բոլոր փողոցները լցված են ժողովրդով:

ԵՌԿՈ-ՀԱՄԱ, 23 հոկտեմբերի: Եւպոնիայում եղած երկրաշարժի ժամանակ սպանված են 4000 և վիրաւորված են 5000 մարդիկ: 50.000 տնւրից աւելի քանդվեցան:

ԲՈՒԽԱՐԵՍ, 23 հոկտեմբերի: Արտակարգ գնացքը իշաւ ընկնելից Նասոպի և Պաշկոնայի մէջտեղը. կաթնասն ապրիլեց. երկու վագոններ այրվեցան, 9 ճանապարհորդներ սպանվեցան և 20 վիրաւորվեցան: Այդ աղետը չարամիտ մարդկանց գործ են համարում:

ՀՌՍՄ, 23 հոկտեմբերի: Այսօր Կապիտոլիում բացվեց խաղաղութեան և միջադատին ընդհանրութեանը միջնորդ դատարանի ձեռքով վճռելու կօնքիսը: Բացմանը ներկայ էին իտալական և օտար պարլամենտների 200 անդամներ: Բացումը տեղի ունեցաւ բաղնիքի զիւլումասների ներկայութեամբ: Պատգամաւորների ժողովը նախագահն ասեց, որ կօնքիէնցիւրի ծրագրերը ձգտում է իրագործել միջադատին միջնորդ դատարան, բայց ի բաց է մերժում քաղաքական հարցերի առանձնապէս ընհաղատութիւնը:

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՆԻՍԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

ՊԱՍԻԱԼԻԳԻ Եղբայրների Ֆիրմայի Բրուսայում (Թիւրքիա)

Պախալիդի եղբ. ցեղիւնք սերմ,

Ինչպէս յայտնի է արդէն կովկասեան շերամապահներից շատերին, յայտնվում է ամենաառողջ և տալիս է մինչև 35 ֆունտ հում սպիտակ ԲՈԺՈԺ սերմի 1 զօրանիկից: Նախվում է քառակուսի արկղներում, 8 զօրանիկ իւրաքանչիւրում, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Գինը զօրանիկի 75 կօպէկ:

Սերմ առնել ցանկացողները մեծ քանակութեամբ կարող են դիմել՝ Թիֆլիս, ԳՎՈՐՑՈՎԱՍ, փողոց, վրաց Ագնուականների բանկի քարվանսարայ, № 119, Պախալիդի եղբայրներին:

Գ. Պ. ԽՕՐՐՐՐՐՐ ԵԱՆ պարապում է ՄԱՍԱԺՈՎ և բժշկական ԳԻՄՆԱՍԿԻԱՅՈՎ, բժշկների ղեկավարութեան տակ:

Նիկոբանդիսյա փողոց, տուն № 16

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԱԻԱԳԸ յայտնվում է ի դիտուելիս Թիֆլիսի վաճառականներին, որ իր գրասենեակում, որը գտնվում է Գլորցովյա փողոցում, Թիֆլիսի Ագնական կալուածական բանկի քարվանսարայի վերին յարկում, պ. Նահանգապետի թղթաւորութեամբ, բացվում է հանգանակութիւն յօղուտ Բուսաստանի ներքին նահանգների ազգաբնակչութեան, որը վնասվել է անաշուղ հունձից: Նուիրատուներին կը արվեն պատշաճաւոր անդորրադրեր:

1—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆՈՒՄ՝ 6-ին նոյեմբեր ամսը 1891 ամի, երեկոյան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաձրի) կապարով տալու նոյն դպրոցի կայուածքը № 46 (ընծայած հանգուցեալ Թարուլի Թեյեանցի), որ գտնվում է Կուր գետի հեղեղատի «Սաղի» վրա: Պայմանաթուղթը կարելի է կարգալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:

1—3

Ներկայ հոկտեմբերի 28-ից, 1891 թ. ի, իման Արեւելիկ ԶԻԹԱԽՈՎԻ կօնտորան տեղափոխվում է իր սեփական քարվանսարան, Սիւնի փողոցում:

1—1

ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտարարում է, որ նոյեմբերի 12-ին, ժամի 11-ին առաւօտեան, վարչութեան ատենաում պիտի աճուրդով վարձու տրվեն զանազան տեղերը Կուր գետի սառուց կտրելու համար. կօնդիլան կարելի է տեսնել ամեն օր ժամի 10-ից մինչև ժամի 2 առաւօտեան:

1—3

Շախվում է ԿԵՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՒՆՈՑՈՒՄ

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

«Խեղարապետ» վէպը 1 ր., «Շուշան ողբերգութիւն» (օպերայի համար) 1 ր.: Մամուլի տակ է և մինչև նոյեմբերի սկիզբները լոյս կը տեսնի 400—650 մեծադիր երեսներից բաղկացած

ԱԼՄԱՍ

Վէպը Թիւրքահայերի ՆՈՐԱՆՈՑԻ կեանքից: Բաժանորդագրութիւնը շարունակվում է ըուրը 50 կօպէկ լոյս տեսնելուց յետոյ կը լինի:

Օտար քաղաքացիը կարող են դիմել ԲԱԿՄ Կոնպոգրաֆիո Կեր-Օգանեսյան. 5—5

